

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 57-րդ և 58-րդ կետերով.

«57) Ստորերկրյա խոռոչներ՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չհանդիսացող ստորգետնյա լեռնային փորվածքներ, որոնք առաջացել են ընդերքօգտագործման արդյունքում»:

«58) Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների ստորերկրյա խոռոչների կառավարում՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չհանդիսացող ստորգետնյա լեռնային փորվածքների վերականգման կամ կառուցման նպատակով իրականացվող միջոցառում, որն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդերքօգտագործման թափոնների կառավարման համար սահմանված նորմերին համապատասխան:

Հոդված 2. Օրենսգրքի 60.2-րդ հոդվածի 4-րդ մասում «կարգը» բառից հետո լրացնել «և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների ստորերկրյա խոռոչների կառավարման և դիտանցման կարգը» բառերով:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:
2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող իրավահարաբերությունների վրա: